ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08

ք. Երևան «15» 01 2021թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է կոմտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4800000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանսական միջոներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 08417829
Գլխավոր	
քարտուղար ----------Ա. Թովմասյան	---------- Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

համարը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)						
1	50111130/511		դրամ	200000	1	ք. Երևան, Արշակունյաց 7	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021 թ.
2	50111130/512		դրամ	200000	1	ք. Երևան, Արշակունյաց 7	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021 թ.
3	50111130/513		դրամ	3400000	1	ք. Երևան, Արշակունյաց 7	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021 թ.
4	50111130/514		դրամ	1000000	1	ք. Երևան, Արշակունյաց 7	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021 թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՀՀ	SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	1 չ/Բ ՎԱԶ 21703 Պրիորա ՎԱԶ 210703-110-001	2 չ/Բ Վազ 21074	3 չ/Բ Կիա օպտիմա կիա սեռատո կիա ռիո	4չ/Բ Հյունդայի Տուքսոն Կիա Սորենտո
1	2	3	4	5	6
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում				
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0	0	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0	0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում			0	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0	0	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0	0	0
10	Առջևին հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0	0	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0	0	0	0

11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0	0	0	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
13	ABS համակարգի ստուգում			0	0
14	էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	5000	0
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	5000	0
16	Թափքի վիճակի ստուգում	0	0	0	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0	0	0	0
18	**1. Շարժիչ**				
19	Շարժիչի հանում և տեղադրում	10000	10000	30000	2000
20	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	10000		10	2000
21	Նույնը կոնդիցիոների դեպքում			10	2000
22	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			10	2000
23	Շարժիչի վերանորոգում	10000	10000	70000	2000
24	Նույնը DOHC դեպքում	10000		10	2000
25	Նույնը V6-ի դեպքում			10	20000
26	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	1000	1000	5000	20000
27	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	1000	1000	10	5000
28	Նույնը աջի համար (V6)			10	5000
29	Նույնը ձախի համար (V6)			10	5000
30	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	5000	5000	20000	5000
31	Նույնը աջի համար (V6)			10	5000
32	Նույնը ձախի համար (V6)			10	5000
33	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	2000	2000	10	5000
34	Շարժիչի գլխիկի վերանորոգում	1000	1000	20000	5000
35	Փականի խցուկի փոխարինում	500	500	10	3000
36	Նույնը V6-ի դեպքում			10	3000
37	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	1000	1000	10	3000
38	Նույնը V6-ի ձախի դեպքում			10	3000
39	Նույնը V6-ի աջի դեպքում			10	3000
40	Նույնը DOHC դեպքում	1000	1000	10	3000
41	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	1000		10	3000
42	Հրիչների փոխարինում SOHC	1000	1000	10	3000
43	Նույնը DOHC դեպքում	1000	1000	10	3000
44	Ատամնավոր փոկի փոխարինում	1000	1000	20000	3000
45	Նույնը DOHC դեպքում	1000	1000	10	3000
46	Նույնը V6-ի դեպքում			10	3000
47	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	500	500	10	3000
48	Նույնը կոնդիցիոների դեպքում			10	3000
49	Նույնը DOHC դեպքում	1000		10	3000
50	Նույնը կոնդիցիոների դեպքում			10	3000
51	Նույնը V6-ի դեպքում			10	3000
52	Նույնը կոնդիցիոների դեպքում			10	3000
53	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	1000	1000	10	3000
54	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			10	3000
55	Մխոցային օղակների փոխարինում	500	500	10	3000
56	Նույնը DOHC դեպքում	500	500	10	3000
57	Նույնը V6-ի դեպքում			10	3000
58	Թափանիվի հանում և տեղադրում	1000	1000	10	3000
59	**2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ**				
60	Յուղի և յուղի զտիչի փոխարինում՝ բարձրորակ յուղով, զտիչը պետք է լինի օրիգինալ և համապատասխանի մեքենայի մակնիշին	10000	10000	500	3000
61	Յուղի պոմպի փոխարինում	1000	1000	10	3000
62	Նույնը DOHC դեպքում			10	3000
63	Նույնը V6-ի դեպքում			10	3000

64	Ղեկավարման բլոկի վերանորոգում	1000	1000	10	3000
65	Բռնկման կարգավորում	0	0	3000	0
66	CO կարգավորում	0	0	10	0
67	Խարնարակի հանում և տեղադրում	1000	1000	10	1000
68	Խարնարակի վերանորոգում	500	500	10	3000
69	Օդի զտիչի փոխարինում	0	0	1000	3000
70	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	500	500	10	3000
71	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	500	500	5000	3000
72	Բենզամղիչի փոխարինում	500	500	6000	3000
73	Վառելիքի զտիչի փոխարինում	500	500	6000	3000
74	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	1000	1000	10	1000
75	Տրամլյորի հանում և տեղադրում	100	100	10	100
76	Տրամլյորի վերանորոգում	100	100	10	100
77	**3. Սառեցման և արտածման համակարգ**				
78	Հովհարի փոկի հանում և տեղադրում	100	100	3000	100
79	Հովհարի հանում և տեղադրում	100	100	10	3000
80	Ռադիատորի հանում և տեղադրում	100	100	12000	3000
81	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	100	10	3000
82	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			10	3000
83	Ռադիատորի վերանորոգում	100	100	10	100
84	Թերմոստատի փոխարինում	100	100	8000	3000
85	Ջրի պոմպի փոխարինում	5000	5000	18000	3000
86	Նույնը DOHC և V-6 դեպքում			10	3000
87	Նույնը կոնդիցիոների դեպքում			10	3000
88	Ջրի պոմպի վերանորոգում	100	100	10	100
89	Նույնը DOHC դեպքում	100	100	10	100
90	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	100	10	100
91	Ընդարձակող բաքի փոխարինում	500	500	2000	500
92	Խլարարի հանում և տեղադրում	500	500	6000	5000
93	Նույնը DOHC դեպքում	500	500	10	5000
94	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	100	100	2000	100
95	**4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ**				
96	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	500	500	10	3000
97	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	500	500	10	500
98	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	5000	5000	10	3000
99	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	100	100	10	100
100	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	100		10	100
101	ՓՏ-ի հանում և տեղադրում	5000	5000	15000	20000
102	ՓՏ-ի վերանորոգում	5000	5000	15000	5000
103	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1000	1000	10	1000
104	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	1000	1000	10	1000
105	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	100	100	10	100
106	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում			10	8000
107	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում			10	5000
108	Նույնը V6-ի համար			10	5000
109	ԱՓՏ-ի հանում և տեղադրում			10	5000
110	Նույնը V6-ի համար			10	5000
111	ԱՓՏ-ի վերանորոգում			10	5000
112	Նույնը V6-ի համար			10	5000
113	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում			12000	5000
114	**5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ**				
115	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում			0	5000
116	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով			0	5000
117	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում			0	5000

118	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	3000	3000	0	3000
119	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	3000	3000	0	3000
120	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	3000	3000	0	3000
121	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	100	100	0	5000
122	**6. Առջևի և հետևի կամրջակներ**				
123	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	100	100	10	100
124	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	100	100	10	100
125	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	100	100	10	100
126	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	100	100	5000	100
127	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	5000	5000	10	15000
128	**7. Կախոց**				
129	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	500	500	10	25000
130	Տրավերսի հանում և տեղադրում	500	500	10	5000
131	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	500		6000	3000
132	Անվակունդի առանցքակալի փոխարինում	2000	2000	10000	5000
133	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	2000	2000	10	5000
134	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	2000		10	5000
135	Նույնը հետին տանող ա/մ-երի համար				5000
136	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	100		10	100
137	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	1000		10	5000
138	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	3000	3000	5000	3000
139	Զսպանակի հանում և տեղադրում	2000	2000	10	5000
140	Զսպակի հանում և տեղադրում				5000
141	Զսպակի վռանների փոխարինում				5000
142	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1000	1000	7000	5000
143	Ներքևի լծակի հանում և տեղադրում	1000	1000	9000	5000
144	Ներքևի լծակի վռանների փոխարինում	100	100	5000	100
145	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	1000	1000	7000	5000
146	Միջին ձգանի հանում և տեղադրում	1000	1000	10	2000
147	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	500	500	10	500
148	Վերևի լծակի հանում և տեղադրում	500	500	9000	1000
149	Վերևի լծակի վռանների փոխարինում	100	100	4000	5000
150	Գնդե հոդակապերի փոխարինում	500	500	5000	1000
151	Ծայրակալների հանում և տեղադրում	500	500	7000	2000
152	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	100	100	10	2000
153	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2000	2000	4000	2000
154	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1000	1000	10	1000
155	Հետևի զսպանակի փոխարինում	1000	1000	10	3000
156	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1000	1000	7000	3000

157	Հետևի ծգածողի հանում և տեղադրում	500	500	10	500
158	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	500	500	10	500
159	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	500	500	5000	1000
160	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	1000		10	1000
161	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	500		10	500
162	Անվաթացքի կարագավորում	5000		5000	1000
163	Ձողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	500		10	500
164	**8. Ղեկային մեխանիզմ**				
165	Ղեկային կալունի հանում և տեղադրում	2000	2000	10000	5000
166	Նույնը V6-ի համար			10	5000
167	Ղեկային կալունի վերանորոգում	2000	2000	25000	5000
168	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	100	100	10	1000
169	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	500	500	10	1000
170	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում			8000	1000
171	Նույնը DOHC դեպքում			10	1000
172	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում			4000	3000
173	Նույնը DOHC դեպքում			10	3000
174	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում			5000	500
175	Նույնը DOHC դեպքում			10	500
176	Նույնը կոնդիցիոների դեպքում			10	500
177	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում			10	500
178	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում			10	500
179	**9. Արգելակային համակարգ**				
180	Գլխ. գլանի հանում և տեղադրում	1000	1000	10	1000
181	Գլխ. գլանի վերանորոգում	500	500	10	1000
182	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	100	100	10	3000

183	Բանվ. գլանի հանում և տեղադրում	500	500	10	1000
184	Բանվ. գլանի վերանորոգում	100	100	10	100
185	Արգելակային համակարգի օդահանում	5000	5000	2000	500
186	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	1000	1000	4000	1000
187	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում			4000	1000
188	Առջևի սուպպորտի վերանորոգում	100	100	2000	100
189	Հետևի սուպպորտի վերանորոգում			10	100
190	Արգելակային փողրակի փոխարինում	1000	1000	2000	1000
191	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	1000	1000	5000	2000
192	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում			5000	2000
193	Հետևի կոճղակների փոխարինում	1000	1000	10	2000
194	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	1000	1000	4000	1000
195	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	1000	1000	4000	1000
196	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	100	100	10	100
197	ABS-ի հանում և տեղադրում			10	1000
198	ABS-ի վերանորոգում			10	100
199	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	500	500	10	500
200	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	100	100	3000	100
201	**10. Էլեկտրասարքավորում**				
202	Էլեկտրասարքավորման վերանորոգում	100	100	8000	1000

203	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	500	500	10	1000
204	Գեներատորի հանում և տեղադրում	1000	1000	5000	5000
205	Նույնը V6-ի դեպքում			10	5000
206	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	5000	5000	10	5000
207	Գեներատորի վերանորոգում	1000	1000	5000	1000
208	Մեկնարկիչի հանում և տեղադրում	1000	1000	5000	1000
209	Մեկնարկիչի վերանորոգում	500	500	5000	500
210	Առջևի լապտերի հանում և տեղադրում	500	500	10	500
211	Հետևի լապտերի հանում և տեղադրում	100	100	10	100
212	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	100	100	3000	100
213	Վազքաչափի հանում և տեղադրում	100	100	10	100
214	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	100	100	10	100
215	Սաքերի պանելի հանում և տեղադրում	100	100	15000	100
216	Արագաչափի հանում և տեղադրում	100	100	10	100
217	Ազդանշանի հանում և տեղադրում	100	100	10	100
218	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	100	100	4000	100
219	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	100	100	10	100
220	Ազդանշանային համակարգի տեղադրում	100	100	5000	100
221	Մագնիտոլայի տեղադրում	100	100	10	100
222	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	500	500	10	500
223	էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	500	500	8000	500

224	էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	500	500	10	500
225	էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	500	500	10	500
226	էլեկտրական տվիչների փոխարինում	500	500	1000	2000
227	էլեկտրական անջատիչների փոխարինում	500	500	10	500
228	Վառոցքի մոմերի փոխարինում	500	500	2000	5000
229	Կոնդիցիոների լիցքավորում	100	100	20000	5000
230	Կոնդիցիոների վերանորոգում	100	100	10	2000
231	**11. Այլ ծառայություններ**				
232	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	5000	5000	3000	5000
233	Ավտոմեքենայի լվացում	1000	1000	10	1000
234	Անիվի հանում և տեղադրում	500	500	1000	500
235	Անվադողի վերանորոգում	500	500	1000	500
236	Անիվի բայանսավորում	500	500	1000	500
237	Անիվի վալց	0	0	10	0
238	CO-զոդման աշխատանքներ, *գին 1 քառ.սմ - ի համար*	500	500	2000	500
239	Խառատային աշխատանքներ	1000	1000	10	1000
240	Փականագործի աշխատանքներ	1000	1000	8000	1000
241	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	2000	2000	500	2000
242	**Ընդամենը ծառայություն**	**197400**	**164700**	**580,300**	**570900**
243	**1.Շարժիչ**				
244	Շարժիչի բլոկ	5000	5000	10	5000
245	Շարժիչի գլխիկ	5000	5000	10	5000
246	Բարձիկ	3000	3000	40000	3000
247	Շարժիչի գլխիկի միջադիր	1000	1000	20000	5000
248	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	1000	1000	10	5000

249	Շարժիչի բաշխիչ լիսեռ	1000	1000	10	1000
250	Շարժիչի փական դուրս մղող	100	100	10	2000
251	Շարժիչի փական ներս մղող	100	100	10	1000
252	Շարժիչի փականի խցուկ	100	100	3000	1000
253	Ծնկած և լիսեռ	500	500	10	500
254	Ծնկած և լիսեռի խցուկ առջևի	100	100	5000	1000
255	Ծնկած և լիսեռի խցուկ հետևի	100	100	9000	1000
256	Ծնկածև լիսեռի արմատական ներդիրներ	500	500	22000	1000
257	Ծնկածև լիսեռի շարժաթևային ներդիրներ	500	500	22000	1000
258	Հենակային տափողակ	100	100	1000	100
259	Մխոց	1000	1000	10	1000
260	Մխոցային օղակներ	1000	1000	35000	1000
261	Ատամնանիվ	100	100	10	100
262	Ատամնավոր փոկ	500	500	40000	5000
263	Շղթա	500	500	25000	5000
264	Հիդրոծգան	500	500	18000	2000
265	Հրիչ	500	500	10	3000
266	Հիդրոհրիչ	500	500	10	1000
267	Բաշմակ	500	500	10	500
268	Հանգստարար	500	500	10	500
269	Թափանիվ	500	500	10	500
270	Թափանիվի պսակ	100	100	10	100
271	Խցուկ բաշխիչ լիսեռի	100	100	10	100
272	Շկիվ	100	100	10	100
273	Շարժաթև	100	100	10	100
274	Կարտերի միջադիր	5000	5000	10	5000
275	Միջադիր	5000	5000	7000	5000
276	**2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ**				
277	Յուղ շարժիչի հանքային, *1 լիտր*	1500	1500	10	2000
278	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր*	1500	1500	10	3000
279	Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր*	1500	1500	6000	5500
280	Յուղի զտիչ	100	100	8000	3000

281	Յուղի պոմպ	100	100	10	100
282	Յուղի պոմպի շարժաբեր	100	100	10	100
283	Յուղի ռադիատոր	100	100	10	100
284	Յուղի փողրակ	100	100	10	100
285	Յուղի ծորակ	100	100	10	100
286	Վառոցքի մոմ	2000	2000	8000	2000
287	Բենզոբաք	100	100	10	100
288	Խառնարակ	100	100	0	100
289	Խառնարակի վերանորոգման հավաքածու	100	100	0	100
290	Ինժեկտորի ֆորսունկա	100	100	10	100
291	Վառելանյութի մղիչ էլեկտրական	500	500	65000	1000
292	Վառելանյութի մղիչ մեխանիկական	100	100	0	100
293	Վառելանյութի զտիչ	2000	2000	25000	3000
294	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	100	100	0	100
295	Վառելանյութի փողրակ	100	100	3000	100
296	Աքսելերատորի ճոպան	100	100	10	100
297	Օդի զտիչ	1000	1000	12000	3000
298	Ջերմաստիճանային տվիչ	100	100	10	100
299	Յուղի տվիչ	100	100	10	100
300	Բաշխիչ լիսեռի տվիչ	100	100	10	100
301	Օդի ծախսի տվիչ	5000	5000	10	1000
302	Արագաչափի տվիչ	100	100	10	100
303	Հովհարի տվիչ	100	100	10	100
304	Ջրի տվիչ	100	100	10	100
305	Բենզոբաքի տվիչ	100	100	10	1000
306	Մարման ընթացքի կարգավորիչ	100	100	10	100
307	Մարման ընթացքի տվիչ	100	100	10	100
308	Ղեկավարման համակարգիչ	100	100	10	100
309	Պարապ ընթացքի տվիչ	100	100	10	100
310	Դրոսելային փականի տվիչ	100	100	10	100
311	Թթվածնի տվիչ	100	100	10	100
312	**3. Սառեցման և արտածման համակարգ**				
313	Հովհարի փոկ	2000	2000	10	2000
314	Հովհար	5000	5000	10	10000

315	Ռադիատոր	5000	5000	90000	12000
316	Ընդարձակող բաք	100	100	10	100
317	Ռադիատորի փողրակ	100	100	18000	100
318	Թերմոստատ	5000	5000	17000	3000
319	Ջրի պոմպ	3000	3000	35000	4000
320	Ջրի պոմպի առանցքակալ	100	100	10	100
321	Ջրի պոմպի թևակ	100	100	10	100
322	Սառեցման հեղուկ *1 լիտր*	2000	2000	4000	2000
323	Ջրի պոմպի սռնանիվ	100	100	10	100
324	Հոլովակ	100	100	30000	100
325	Փոկ	100	100	25000	100
326	Փոկ կոնդիցիոների	100	100	10	100
327	Ծորակ	100	100	10	100
328	Խլարարի ներդիր	100	100	10	100
329	Խլարարի կախոց	100	100	10	100
330	Կրոնշտեյն	100	100	10	100
331	Անուր (Խամուտ)	100	100	1000	100
332	Խլարար	100	100	10	100
333	Ռեզոնատոր	100	100	10	100
334	Վառարանի ռադիատոր	100	100	10	100
335	**4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ**				
336	Կցորդման բանվորական գլան	500	500	10	500
337	Կցորդման գլխավոր գլան	500	500	10	500
338	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	500	500	10	500
339	Կցորդման տանող սկավառակ	3000	3000	40000	100
340	Կցորդման տարվող սկավառակ	10000	10000	45000	100
341	Կցորդման առանցքակալ	10000	10000	28000	100
342	Կցորդման փողրակ	100	100	10	100
343	Փոխանցման տուփ	50000	50000	10	5000
344	ՓՏ-ի առջևի խցուկ	2000	2000	5000	2000
345	ՓՏ-ի հետևի խցուկ	2000	2000	10	2000
346	ՓՏ-ի առանցքակալ	2000	2000	16000	2000
347	ՓՏ-ի առաջնային լիսեռ	100	100	10	100
348	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	100	100	10	100
349	ՓՏ-ի եղանիկ	100	100	10	100
350	ՓՏ-ի ատամնանիվ	100	100	15000	100
351	Համաժամիչ	100	100	15000	100
352	Մուֆտ	100	100	10	100
353	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	5000	5000	10	100
354	ԱՓՏ-ի զտիչ			28000	100
355	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու			10	100
356	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ			10	100
357	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	5000	5000	8000	5000
358	ԱՓՏ յուղ, 1 լիտր			10	5000
359	ՓՏ-ի առաջնային լիսեռ	100	100	0	100
360	Հերմետիկ	100	100	4000	100
361	**5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ**				

362	Բաշխիչ տուփ	100	100	0	100
363	Բաշխիչ տուփի խցուկ		100	0	100
364	Բաշխիչ տուփի առանցքակալ		100	0	100
365	Բաշխիչ տուփի ատամնանիվ		100	0	100
366	Բաշխիչ տուփի լիսեռ		100	0	100
367	Կարդանային լիսեռ		100	0	100
368	Էլաստիկ մուֆտ		100	0	100
369	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ		100	0	100
370	Կարդանային լիսեռի խաչուկ		5000	0	5000
371	**6. Առջևի և հետևի կամրջակներ**				
372	Հետևի կամ առջևի կամրջակ	1000	1000	0	1000
373	Ռեդուկտոր	1000	1000	0	1000
374	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	1000	1000	0	1000
375	Դիֆֆերենցիալ	1000	1000	0	1000
376	Դիֆֆերենցիալի սատելլիտ	1000	1000	0	1000
377	Տանող ատամնանիվի խցուկ	1000	1000	0	1000
378	Տանող ատամնանիվի առանցքակալ	100	100	0	100
379	Դիֆֆերենցիալի առանցքակալ	1000	1000	0	1000
380	Կիսասռնի	3000	3000	0	3000
381	Կիսասռնու առանցքակալ	3000	3000	15000	3000
382	Կիսասռնու միջադիր		100	0	100
383	Կիսասռնու խցուկ		100	0	100
384	Կարգավորիչ տափողակ		100	0	100
385	**7. Կախոց**				
386	Տրավերս	500	500	10	500
387	Կրոնշտեյն	500	500	10	500
388	Ձախ կամ աջ հոդակապ	3000		65000	1000
389	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	1000		15000	3000
390	Անվակունդ	1000		10	1000
391	Անվակունդի խցուկ	100		10	100
392	Անվակունդի ներքին առանցքակալ	1000	1000	30000	100
393	Անվակունդի արտաքին առանցքակալ	1000	1000	0	1000
394	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	1000		10	1000
395	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	1000		0	1000
396	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	100		10	100
397	Հարվածամեղմիչի թասակ	2000	2000	25000	1000

398	Զսպանակ	1000	1000	10	1000
399	Առջևի հարվածամեղմիչ	5000	5000	75000	5000
400	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	1000	1000	10	1000
401	Հարվածամեղմիչի վռան	1000	1000	10	1000
402	Ներքևի լծակ	1000	1000	10	3000
403	Ներքևի լծակի վռան	1000	1000	12000	3000
404	Վերևի լծակ	1000	1000	10	3000
405	Վերևի լծակի վռան	1000	1000	10	3000
406	Գնդե հոդակապ	1000	1000	25000	3000
407	Առջևի կայունարար	1000	1000	10	3000
408	Առջևի կայունարարի վռան	1000	1000	6500	3000
409	Առջևի կայունարարի առջևի վռան	1000	1000	10	3000
410	Հետևի զսպանակ	1000	1000	10	3000
411	Հետևի ցնցամեղմիչ	1000	1000	60000	3000
412	Հետևի մետաղաձող (շտանգա)	1000	1000	10	3000
413	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	1000	1000	9000	3000
414	Հետևի անկյունագծային լծակ	1000	1000	10	3000
415	Անկյունագծային լծակի վռան	1000	1000	10	3000
416	Զսպակ (ռեսսորա)	1000	1000	0	3000
417	Զսպակի վռան	1000	1000	0	3000
418	Զսպակի միջադիր	1000	1000	0	3000
419	Զսպակի բռնիչ	1000	1000	0	3000
420	Աջ կամ ձախ ձգան	1000	1000	10	3000
421	Ծայրակալ	1000	1000	22000	3000
422	Ձգան մեջտեղի	1000	1000	0	3000
423	Անվահեծ	1000	1000	10	3000
424	**8. Ղեկային մեխանիզմ**				
425	Ղեկային կալուն	5000	5000	10	5000
426	Ղեկային կալունի առանցքակալ	5000	5000	10	5000
427	Ղեկային կալունի խաչուկ	5000	5000	10	5000
428	Հիդրոուժեղարար			10	5000
429	Հիդրոուժեղարարի փոկ			10	1000
430	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ			10	1000
431	Հիդրոուժեղարարի պոմպ			10	1000
432	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ			10	1000
433	Ղեկային ձող			10	1000
434	Ղեկային ձողի ծայրակալ			10	1000
435	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	100	100	7000	1000
436	Ճոճանակ	100	100	0	100
437	Ճոճանակի վռան			0	100

438	7. Արգելակային համակարգ				
439	Գլխ. գլան	100	100	10	100
440	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	100	100	10	100
441	Վակուումային ուժեղարար	100	100	10	100
442	Բանվ. գլան	100	100	10	100
443	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	100	100	10	100
444	Արգելակային փողրակ	100	100	10	100
445	Սուպպորտի ուղղորդիչ	100	100	10	100
446	Սուպպորտի մանժետ	500	500	10	500
447	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	5000	5000	35000	6000
448	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	5000	5000	30000	6000
449	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	5000	5000	10	6000
450	Առջևի արգելակային սկավառակ			25000	6000
451	Հետևի արգելակային սկավառակ	2000	2000	10	12000
452	Ձեռքի արգելակի ճոպան	100	100	10	100
453	ABS-ի տվիչ	100	100	10	100
454	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	5000	5000	2000	5000
455	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	5000	5000	2000	5000
456	Ձեռքի արգելակի ճոպան	100	100	10	100
457	9. Էլեկտրասարքավորում				
458	Գեներատոր	3000	3000	100	3000
459	Գեներատորի դիոդային կամրջակ	1000	1000	20000	2000
460	Գեներատորի ռելե	3000	3000	25000	2000
461	Գեներատորի առանցքակալ	1000	1000	10000	2000
462	Ստարտեր	1000	1000	10	2000
463	Ստարտերի ռելե	1000	1000	10	2000
464	Ստարտերի ածուխ	1000	1000	12000	2000
465	Բենդեքս	1000	1000	21000	2000
466	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	1000	1000	10	2000
467	Առջևի լապտեր	1000	1000	10	2000
468	Առջևի թարթիչ	1000	1000	10	2000
469	Հետևի լապտեր	1000	1000	10	2000
470	Հետևի թարթիչ	1000	1000	10	2000
471	Արգելակային լապտեր	1000	1000	10	2000
472	Լամպ	1000	1000	9000	2000
473	էլեկտրական անջատիչ	1000	1000	10	2000
474	էլեկտրական տվիչ	500	2000	30000	2000
475	էլեկտրական չափիչ սարք	500	2000	10	2000
476	Բռնկման կողպեք	500	2000	10	2000
477	էլեկտրալարերի գլխավոր խուրց	500	2000	10	2000
478	էլեկտրալարերի երկրորդային խուրց	500	2000	10	2000
479	Վառոցքային լարերի խուրց	500	2000	10	1000
480	Վառոցքի մոմի ծայրակալ	500	2000	7000	500
481	Վազքաչափ	1000	1000	10	1000
482	Վազքաչափի ճոպան	200	200	10	1000
483	Արագաչափ	1000	1000	10	1000
484	Ազդանշան	1000	1000	10	1000
485	Ապակելվացիչ	1000	1000	5500	1000

486	Ապակելվացիչի շարժիչ	1000	1000	15000	1000
487	Դռների կենտրոնական փական	1000	1000	10	1000
488	Ազդանշանային համակարգ	1000	1000	10	1000
489	Մագնիտոլա	1000	1000	10	5000
490	Էլեկտրաամբարձիչ	1000	1000	10	5000
491	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	5000	5000	10	100
492	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորգման համար	5000	5000	500	100
	Ընդամենը ապրանք	309100	318400	1,414,970	**389200**
	Ընդամենը ըստ չափաբաժնի	506500	483100	1,995,270	**960100**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար ----------Ա. Թոկմասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

---------- Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

15.01.2021 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08 տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան
2021 թ.

20.02.2021 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի հունվարի 15-ին կնքված տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2021 թ.-ի դեկտեմբերի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011030815 ՀՎՀՀ 02534328	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ ք. Երևան, Մյասնիկյան 22/4 «Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ Հ/Հ 220083335012000 ՀՎՀՀ 08417829
Գլխավոր քարտուղար----------Ա. Թովմասյան (ստորագրություն) Կ.Տ.	---------- Վ. Բաղդասարյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
15.01.2021 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ)

ՀՀ դրամ

դրավ հրով նախա տես. /բ դամա ը	գնումների պլանով նախատես.միջան ցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130 /511	ՎԱԶ 21703 Պրիորա ՎԱԶ 210703-110-001	0	0	22000	44000	66000	88000	110000	132000	154000	176000	200000	200000
2	50111130 /512	Վազ 21074	0	0	22000	44000	66000	88000	110000	132000	154000	176000	200000	200000
3	50111130 /513	Կիա օպտիմա կիա սեռատո կիա ռիո	180000	180000	550000	920000	1290000	1660000	2030000	2400000	2770000	3140000	3400000	3400000
4	50111130 /514	Հյունդայի Տուքսոն Կիա Սորենտո	0	0	110000	220000	330000	440000	550000	660000	770000	880000	1000000	1000000

Պատվիրատու

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար---------- Վ. Թովմասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2200833350120000
ՀՎՀՀ 08417829

---------- Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.